**Ամփոփ նյութ**

## Ա/Ձ «ԱՇՈՏ ՖՌԱՆԳՈՒԼՅԱՆ» ԳՐԱՎԱՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ Ա/Ձ **«ԱՇՈՏ ՖՌԱՆԳՈՒԼՅԱՆ»** գրավատան նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ՝ գրավատնային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:
Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ**
**Որոշում N 1/118Ա**
**05/04/2021**

## Ա/Ձ «ԱՇՈՏ ՖՌԱՆԳՈՒԼՅԱՆ» ԳՐԱՎԱՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար Գրավատան նկատմամբ կիրառել տուգանք՝ **500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով**:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գրավատուն մուտքագրվելու կամ Գրավատան սահմանած կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ** **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**